

ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհը սրընթաց փոփոխվում և զարգանում է, ինչը ենթադրում է կրթական համակարգերի վերափոխում՝ միտված կրթության բովանդակության բարելավմանը: ՀՀ կրթական նոր քաղաքականության մեջ հիմնական առաջնահերթություն է հանդիսանում կրթության բովանդակության և վերջնարդյունքում դրա պրակտիկ կիրառման ապահովումը, ինչը ենթադրում է մանկավարժական, առարկայական և մեթոդական լրացուցիչ հետազոտությունների անհրաժեշտություն:

Ներկայացվող թեմայի շրջանակում աշխատանքային խումբը մշակելու և ներկայացնելու է աստիճանական բարդացման սկզբունքով կազմված ֆիզիկական և մաթեմատիկական խնդրաշարքեր, վեր հանելով.

- *ա/լաբորատոր, գործնական աշխատանքների և փորձարարական խնդիրների, բ/տիպային խնդիրների ոչ տիպային լուծումների, գ/«բանաձևային» գիտելիքներ չպահանջող ֆիզիկական և մաթեմատիկական տրամաբանական խնդիրների* օգտակարությունն ու կարևորությունը սովորողների մոտիվացիայի բարձրացման, ստեղծագործական և տրամաբանական մտածողության զարգացման պրոցեսում,
- ֆիզիկական և մաթեմատիկական սահմանումների իմացության և լիարժեք յուրացման անհրաժեշտությունն ուսուցման պրոցեսում:

Այս ամենը, կարծում ենք, կնպաստի թե՛ կրթության որակի բարձրացմանը, թե՛ սովորողների էվրիստիկ մտածողության զարգացմանն ու ինքնուրույնության ձևավորմանը, թե՛ ֆիզիկայի ու մաթեմատիկայի գործող, սկսնակ և ապագա ուսուցիչների մեթոդական պատրաստվածության աճին:

Որպես թեմայի շրջանակում կատարված աշխատանքի վերջնարդյունք նախատեսվում է հրատարակել 14 գիտամեթոդական հոդված: